

Պատասխան

Սոցիալապես անապահով քաղաքացիներին պետության կողմից ցուցաբերվող աջակցությունն իրականացվում է անապահովության գնահատման համակարգի միջոցով: Ըստ օրենքի ընտանեկան նպաստ նշանակվում է այն ընտանիքին, որի անապահովության միավորը բարձր է ընտանիքի անապահովության սահմանային միավորից: Ներկա պահին այն կազմում է 30.00 իսկ դրանից պակաս անապահովության միավորի դեպքում սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին կից գործող սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ նշանակվում է եռամսյակային հրատապ օգնություն: